

ՄԱՐՏ

Տարեկան գինը 10 ռուբլի կես տարվան 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպեկով

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առօրեայից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ
Տ է լ է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հասարակութեան աջակցութեամբ.—Ներ-
քին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անբերրութեանից փառ-
վածների օգտին. Մեր հոգեւոր հաստատու-
թիւնների շուրջը. Օպերային ներկայացումներ.
Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ֆրանսիայից.
Արտաքին լուրեր.—Հեռագրեր.—ՅԱՅՏԱ-
ՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գիւղա-
յու ցաւերից.

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱԶՆԱՅՈՒԹԵԱՄԲ

Ժողովրդական համայնարանի, ժողովր-
դական օգտակար գումարածութիւնների կազ-
մակերպելու, ժողովրդական տներ շինելու
գաղափարը Թիֆլիսում արդէն գրաւել է
իր վրա առանձին ուղարկութիւններով Մի քա-
նի տարվա ընթացքում տեղի ունեցած
փորձերը ցոյց տուին, որ Թիֆլիսի ազգա-
բնակչութիւնը ուրախութեամբ կընդունէ
Ժողովրդական տները և կը ստանայ նրանցից
գրական օգուտ իր համար:

Մենք մի քանի անգամ ստացել ենք հա-
տարակ ժողովրդի կողմից վկայութիւններ
և յայտարարութիւններ այն մեծ գոհու-
նակութեան մասին, որով տոգորված են
ձրի և էականազին ներկայացումների և
գիւրամատչելի դաստիարակութիւնների յա-
ճախորդները դէպի ներկայացումների և
դաստիարակութիւնների զեկակարները: Ժո-
ղովրդի մէջ կան բազմաթիւ անձինք, ո-
րոնք խնդրում են շարունակել սկսված
գործը և տալ նրան մշտական և ընդար-
ձակ կազմակերպութիւն:

Թէ քաղաքային վարչութիւնը և թէ
պաշտօնական շրջանները Թիֆլիսում հա-
մալրութեամբ են վերաբերվում ժողովր-
դական տների գաղափարին և իրանց կող-
մից պատրաստակամութիւն են յայտնել
աջակցելու այդ օգտաւէտ գործի ղեկա-
վարներին: Հասարակութեան գաղափարն
խաւերում լավում է նոյն համակրական
վերաբերմունքը:

Սակայն այդ օգտակար և միանգամայն
ժամանակակից գործը լաւ կերպով կազմա-
կերպելու համար անհրաժեշտ է, որ դե-
կալարները ձեռքին լինեն առատ դրամական
միջոցներ, որպէս զի կարելի լինի ընդար-
ձակ և վարչութիւններ կառուցանել
թէ դաստիարակութիւնների, թէ ընթերցա-
րանի, թէ ներկայացումների և թէ այլ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՒՂԱՑՈՒ ՑԱՒԵՐԻՑ

(Պատկեր Ախալքալաքի գաւառի կեանքից)

(Վերջ)

Գիւղեր է, սեւ ու մութ գիւղեր: Հնչում է ե-
կեղեցու կոչանքը, հնչում է մերթ միտք, մե-
լամաղձոտ, որ լացող մանկան միկտողի պէս
խնդրում է հեռուից փչող զով դեպիւրի մէջ,
երբեմն էլ կատաղի վագրի պէս մոնչում է, դո-
ղանչում, սար ու ձոր գողգոցնում: Ո՞վ էր
սակայն, որ համարձակվել էր գիւղերում այդ
պահուն խանդարել լոկի ընտելեան կուսական
խաղաղութիւնը: Անբուժ ժամկոչի կոչն էր, որ
բարեպաշտ աղօթողներին Աստուծո տաճարն
էր հրաւիրում: Բայց չէ որ դեռ գիւղեր էր...
Թէ մի անակնկալ փորձանք էր պատահել գիւ-
ղում... Ոչ այս և ոչ այն: Չամբուրեցի Սնդը-
չնից խելագար Պետրոսն էր դա, որ մի կերպ
անկից փախչելով, բոկոսն ու գլխաբաց, հոգեւոր
հրեշտակի պէս, չուլ չապկի մէջ կուլուրված,
հնչեցնում է եկեղեցու կոչանքն ու կրակոտ
աչքերը բոցավառ գերանների պէս վառվող
աստղերին յառած՝ լալազին ձայնով աղբսում,
զլուրթիւն, օգնութիւն է հայցում: Պատասխան

նպատակայարմար գումարածութիւնների հա-
մար: Այդ միջոցները պէտք է տայ հասա-
րակութիւնը:

Օգտաւէտ գործը չը պէտք է կանգ առ-
նի նիւթական միջոցների պակասութեան
պատճառով: Ամօթ է մի հասարակութեան
համար անկարող լինել նոյն իսկ համեստ
գումարներ ժողովել մի այնպիսի գործի
համար, որից պէտք է օգտվի ժողովրդի
մասուն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԲԵՐՐՈՒԹԻՒՆԻՆԵՐ ՎՆԱՍՎԱՅՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ախալքալաքի գաւառի անբերրութիւնից
փառվածների օգտին ստացանք հետեւեալ
նուիրատուութիւնները. Թիֆլիս Գ. Զան-
չեանից 25 ռուբլի. Բագրատ Զեֆեան գործա-
րանի ծառայողներից, արհեստագործներից և
բանուորներից՝ իրանց մէջ հանդանակած 108 ռ.
51 կոպեկ. Կրասն օվոդսկի մի պարոնից, որ
չէ ցանկանում անունը յայտնել, 3 ռուբլի և
Բաթումի Ա. Մանթաշեանի գործարանի ծա-
ռայողներից՝ 17 ռուբլի, որ նուիրել են հետե-
ւեալ անձինք.—Յ. Ս. 2 ռ., Ա. Սերովբեան 1
ռ. 50 կ. Ն.Ն. Ա. Տէր-Բաղդասարեան, Կ.
Մարտիրոսեան, Ի. Մարտիրոսեան, Ս. Արու-
չեան, Ն. Խաչատրեան, Ն. Արզումանեան, Ս.
Օվանէսեան, Ս. Մարգարեան, Ա. Մարտիրո-
սեան, Ս. Գրիգորեան, Յ. Օվանէսեան և Ն.
Գապարեան՝ իւրաքանչիւրը մի-մի ռուբլի և
Ա. Մանուկեան 50 կոպեկ:

Ընդամենը նոր նուիրատուութիւններ կղել
են 153 ռուբլի 51 կ., որ նախկին 681 ռ. 13
կոպեկի (սխալմամբ «Մշակ» № 55-ում տրւե-
լած է 671 ռ. 13 կ.) հետ միասին կանէ 834
ռ. 64 կոպեկ:

ՄԵՐ ՀՈԳԵՒՈՐ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐԶԸ

Այս վերնագրի տակ «Մշակ» 24 և 25 հա-
մարներում լոյս տեսած մեր յօդուածը Նիկ.
սարկ. Մելիք-Թանգեանին առիթ է տուել մի
քանի խօսք ասել մեր չօչափած խնդիրներից
մէկի մասին, այն է՝ որպէս թէ խօսելով օրէն-
քի հիման վրա, ինքներս չեղվել ենք օրէնքից
և քաօսից խուսափել ուղիղով քաօս ենք
պարտաստել:

Մեր յօդուածները ընդհանուր և թուղիկ
բնագրութիւն ունենալով՝ աւելորդ էինք հա-

չը կայ, լուռ է չորս կողմը... Զայրացած կա-
տաղում է նա, աղբսանքը փոխում սպառնա-
քի ու կոչանքի մոնչող զոգանջիւնի հետ սկսում
է պահանջել, գոռոցող, հայհոյել... Գիւղացիք
զարթնում, չըջապատում, բռնում են նրան:

—Հեռու, հեռու կեցիք, արան, նրան հրելով
գոռում է կատաղած Պետրոսը, ես Աստուծո եմ
եղել, Արուստ սարը ցորեն դառուցի, Տաւան-
թեմիսան (սար)՝ գարի. ոսկի կանէթս բերէք,
էրթանք ձեզի տամ քիւրադի...

Հնգ, հնգ ու հնգ միայն, գիտէք գարի, չոր,
սեւ հնգ միայն, հնգ, որ կարելի լինի քաղցը,
լոկ քաղցը յաղցենել...

Աման անցաւ, եկաւ աշունքը, գիւղացու կալ
ու կուտի ժամանակը: Մեր վարի՞ք գիւղերը
(Չամբուրա, Վաչիան, Դիլիսիա, Օրձա, Կորեւ,
Գիւրմիւրդ, Խանդո, Արագուս և այլն) գրե-
թէ բոլորն էլ սակաւահող են: Բայց թէ, ըն-
թերցող, ձեզ հետ մի ուրիշ ապրի մտնէինք
կալոցին Վաչիան, կամ այդ գիւղերից մէկը,
կը տեսնէիք յիւրաք, թէ մեր յամառ գիւղա-
ցու տոկուն աշխատանքը, նոյն իսկ իր պա-
պական «փիթած» գութանով, ինչք կարող է
անել:

Իրկնադէմ է: Արեւն, հետիոտն ծերուկ ձա՞մ,
բորդի պէս, կոթնել է սարերի կատարին, բաժ-
րակի քուլանքի պէս, փռված փափուկ ամպե-
րին ու մի թնթեւ մշուշ էլ հովանոցի պէս
զցել երեսին: Սեւ սեւ ամպերը, պատերազմող

մարի մանրամասնութիւնների մէջ մտնել
և առաջ բերել Օրինագրից յօդուածներ, բայց,
ինչպէս երեւում է յիշեալ սարկաւադի յօդուա-
ծից (տես «Մշակ» 35), Օրինագրից յօդուա-
ծներ չը գնել թիւրիմացութիւն է առաջացրել,
ուստի կամենում ենք այստեղ պարզել օրէնքի
յօդուածները, որքան այդ վերաբերում է մեր
չօչափած խնդրին:

Մենք ասել էինք, որ երեւանի թեմակալը
ինքը Կաթողիկոսն է, իսկ երեւանի, Կարսի,
Ալեքսանդրապոլի, Նախիջևանի և Տաթևի
փոխանորդները՝ միմեանց հաւասար իրաւունք-
ներով են մի թեմակալի, Կաթողիկոսի, փոխա-
նորդ Նիկ. սարկաւադ Մելիք-Թանգեանը
չէ հերքում, որ երեւանի թեմի հինգ փոխա-
նորդները Հայրապետական փոխանորդներ են
օրէնքի հիման վրա (տես XI հատ. I Մ. 1165
յօդ. հրատ. 1896 թ.), բայց յիշելով նոյն օ-
րէնքի 1189 և 1191 յօդուածների վրա՝ յայտ-
նում է թէ՛ փոխանորդները միայն նախագահ-
ներ են հոգեւոր կառավարութիւնների, իսկ
վերջիններս ենթարկվում են կոնսիստորիային,
առանց որի ոչինչ անել չեն կարող. ապա ու-
րեմն, երբեկանում է յօդուածագիրը, փոխա-
նորդները ենեղեցական-վարչական գործունե-
չեն: Այս բաւական չէ, նա աւելացնում է, թէ
1183 յօդուածի տրամադրութեամբ, կոնսիստո-
րիայում նախագահում է թեմակալ առաջնոր-
դը և այդ յօդուածի տակ մտնում է միայն
երեւանի փոխանորդութիւնը, որի փոխանորդը
համարվում է կոնսիստորիայի նախագահ, իսկ
միւսները՝ հոգեւոր կառավարութիւնների նա-
խագահներ են:

Ինչպէս տեսնում է ընթերցողը, յօդուածա-
գիրը երկու հարց է վճռում. նախ՝ որ երեւանի
փոխանորդն է երեւանի կոնսիստորիայի նա-
խագահ, երկրորդ՝ որ փոխանորդները ինքնու-
րոյն գործելու իրաւունքից զրկված են:

Առաջին հարցը, թէ երեւանի փոխանորդն է
կոնսիստորիայի նախագահ, բացարձակ սխալ է
և հակառակ օրէնքի տրամադրութեան, որով-
հետեւ կոնսիստորիաների նախագահութեան
համար կայ միայն մի յօդուած—1183, որ պար-
զապէս ասում է թէ՛ կոնսիստորիաներում նա-
խագահում է թեմակալ առաջնորդը, իսկ երե-
ւանի թեմի համար 1165 և 1183 յօդուա-
ծների իրար մօտեցնելուց կը ստանանք այն,
որ Կաթողիկոսը, իբրեւ թեմակալ, (1165) է և
նախագահ կոնսիստորիայի (1183): Եթէ ուրիշ
կերպ լինէր, աշուշտ այդ յօդուածը ծանո-
թութիւն կամ յանդուած կունենար:

Որպէս զի ցոյց տանք յօդուածագիրը պնդած
երկրորդ կէտի սխալ լինելը, մեք պէտք է ծանո-

բանակներ պէս, յոնքերը կիտած շտապում
են դէպի լեռների անտառի բարձունքը. մի
քանիսն էլ, բանակից յետ մնացած վաշտերի
պէս, խնթ ու խնթառ վազվզում են երկնքի
վրա, երեւի իրանք էլ չը գիտեն ուր: Թող
ու դուռնանա առել է գիւղը, երկինքը ու գե-
տին խառնվել են իրար: Մերթ ընդ մերթ գո-
ռացող ամպերի խուլ որոտին իբրեւ արձա-
գանք պատասխանում են կամձարների ու
կալուորների խառնիչփոթ աղաղակը՝ «Հա՛ ջէյ-
րան ջան, հա՛, եղաւ, եղաւ, կայն եղաւ, մէջ
տարի, մէջլիքի մեռնաւ, խնձոր ջան (եղնրի ա-
նուն), կայն եղաւ...»

Ահա եւ կալը: Մի կողմում ուրախ հռհռա-
ցող մանուկների զեկակարութեամբ՝ կլոր պը-
տոյտ են անում վեց զոյգ կարմիր ու ձերմակ
առողք կնքներ, միւս կողմում՝ չորս ծովտան
հարսներ, ալ ու խաչխաչ ցորենի սարի պէս
սիրուն «թէճն» են պրծել, նրանց մօտ երկու
հոժկու երիտասարդներ միւս «թեղը» հանել,
կէս են արել ու մաղող են կանչում:

—Կամերը թողէք, կալը թոփ էրէք, տղաք,
մէ երկուսը ա էրթը նեւ լցէք... քրտինքը
սրբելով կանչում է ցորենը չափող տան մեծը:

Գեղեցիկ, հրաշալի, մարդու քէֆն է գալիս,
չէ ընթերցող:

Բայց ապա այս տարի կալոցին մտնէիք նոյն
գիւղը:

Երկինքը պարզ, կապուտակը բաց, արեւն էլ,

թանանք թեմակալ առաջնորդների իրաւունք-
ների սահմանների հետ. տեսնենք օրէնքն ինչ է
ասում այդ մասին—Օրէնքի 1170 յօդուածը
բառացի այս է. «Հայ-լուսաւորչական արքե-
պիսկոպոսները Բարձրագոյն նրանց հաւատա-
ցած թեմերի այս դաստիարակեան (հայոց) թե-
մակալներն են և պատասխանատու են նրանց
կառավարելում պետութեան և իրանց հոգե-
ւոր իշխանութեան առաջ: Նրանց աջակ-
ցում են (СОДѢЛСТВУЮТ) գործեր կառա-
վարելու մէջ իւրաքանչիւր թեմում
հիմնված հայ-լուսաւորչական կօն-
սիստօրիաները»: Այս ընդգծած նախագա-
սութիւնը պարզապէս ցոյց է տալիս, որ վար-
չական գործունեք ոչ թէ կոնսիստորիաներն
են, այլ թեմակալները, քանի որ արանք են
թեմի մէջ պատասխանատու անձն, իսկ կօն-
սիստօրիան՝ միայն գործակից: Եթէ այս 1170
յօդուածի վրա մի քիչ խիստ նայենք, կարող
ենք ասել, որ կոնսիստորիաները թեմակալ
առաջնորդների դիւանատներն են և առանց
նրանց գիտութեան ոչինչ չեն կարող անել:
Մեր ասածները հաստատում են և յետագայ
1171—1182 յօդուածները, ուր մի առ մի
թուած է թեմակալների պարտքն ու իրաւունքը:
Աւելի պարզ է 1175 յօդուածը, որ առաջնորդ-
ներին իրաւունք է տալիս իրան հաւատացած
թեմի հայերին դէպի բարին առաջնորդելու
համար հրահանգներ տալ և կարգադրութիւն
անել: Նոյն օրէնքի 1184 յօդուածը առաջնորդ-
ներին է տալիս իրաւունք կազմակերպել կօն-
սիստօրիաները իրանց ցանկացած անդամնե-
րից, որոնց մասին միայն տեղեկագրում են
սինօդին ի գիտութիւն, որ կրկին ապացոյց է,
թէ կոնսիստօրիան իր ամբողջութեամբ ստո-
րագրվում է թեմակալին, ապա ուրեմն թեմա-
կալի ներկայութեամբ անկախ վարչական մար-
մին չէ ներկայացնում: Այլ բան կը լինէր, եթէ
կոնսիստօրիաների անդամները նշանակվէին
սինօդից, բայց օրէնագրում այդպիսի բան չը
կայ ասած:

Ուրեմն այլ եւս կանկած չէ մնում, որ իս-
կապէս վարչական գործունեք թեմակալներն են,
որոնք կարող են գործել անկախ կօնսիստօրիա-
ներից, պատասխանատու մնալով պետութեան
և բարձր հոգեւոր իշխանութեան առաջ:
Այժմ մնում է պարզել, թէ ինչ անհնչութիւն
կայ թեմակալների և նրանց փոխանորդների
մէջ:

Թողուածագիր սարկաւադը, ի նկատի ունե-
նալով օրէնքի 1183 և 1189 յօդուածները, ա-
սում է. «Առաջնորդները կօնսիստօրիաների նա-
խագահներ են, իսկ փոխանորդները՝ հոգեւոր

դաստիարակ ծերուկի տաղ գլխի պէս, չիկացած,
դաշտերն ամայի, արտերը մերկ, տեղ-տեղ մի-
այն մի քանի դատարկ հասկեր ժամարձանների
պէս դիք տնկված, կարծես լոկ վկայելու հա-
մար, որ յիւրաք այդ արտերը զարնանք ցա-
նած են եղել... Բայց ուր է բերքը, արտին
սովորական սրկ եղանները, խիտ դէզերը...
գուցէ գիւղ են տարել: Գնանք գիւղ, բայց
գիւղն էլ խաղաղ է ու լուռ, ոչ ամպերի հետ
զրկախառնվող թողն ու դուռնալ կայ, ոչ եր-
կնքի խուլ որոտին արձագանք կալուոր ու
կամձարի անուշ լէյն ու լըվլըվոցը, ոչ թեղ
ու թեղուոր, ոչ մաղ ու մաղուոր... Երեւելու
թեղ չը կայ, մաղելու թէճ չը կայ... Թեղուոր-
ները գնացել են Թիֆլիս, Բագու, Բաթում,
(Չաւախքի գիւղացիք—եւ պանդխտութիւն...)
մի կտոր հայ վաստակելու, ընտանիքը սովից
փրկելու... Ինչո՞ւ մաղուորները, պրզաբաժնւ
թող մի շարաթ կրակ չը տեսած թեմին չըը-
թին, լուռ արտասովում են, իրարից ծածուկ...
Հեկեկալով ներս է ընկնում մի մանուկ ու
զանգաւաղում մօրը, որ մի մեծ տղայ հայն իր
ձեռից խլել փախել է... Դռանը տան մեծն իր
աչքի լոյս եղները վերջին զոյգն է սակարկում
ու աչքերից արցունքը հեղելով պէս թափում:
14 տարեկան որդին, եղները ընկերն ու հօ-
տաղը, հօր ոտներն ընկած, արտասովով ա-
ղերսում է այդ մի զոյգն իրան բաշխելը:

—Տացու ջան, ես ա կերթամ Բեաքի, Թիֆ-

կառավարութիւններէ, իսկ 1191 յօդուածը արգելում է վերջիններս որ եւ է ինքնուրոյն գործ կատարել, առանց այդ բանի համար հրահանգութիւնն ստանալու կօստիստօրիայից, որից մակարեւրում է թէ՛ հետեւաբար փոխանորդները վարչական մարմին չեն ներկայացնում մինչեւ համաձայն չենք այս եղբայրացութեան հետ Գիշ վերեւ մենք ցոյց տուինք, որ առաջնորդները, բացի կօստիստօրիաներէ մէջ նախագահելուց, ունեն անկախ գործունէութիւն, իւրեւ թեմականներ: Փոխանորդներն էլ, իրեն նրանց ներկայացուցիչները, վիճակներում են եւ նախագահ հոգեւոր կառավարութիւններէ, եւ անկախ վարչական մարմին: Թէեւ օրէնքում փոխանորդներէ անկախ գործունէութեան մասին ոչինչ չը կայ ասված, բայց չը կայ եւ հակառակը այնող յօդուած, մինչդեռ ունենք 1165 յօդուածը, ուր պարզ ասված է թէ՛ կաթողիկոսը իր թեմը (երեւանի) կառավարում է իր փոխանորդներով, որին այլ մեկնութիւն առ չէ կարելի, քան այն, որ փոխանորդները ինքնուրոյն գործունէութեան ժամանակ հրահանգվելու են թեմակալից եւ պատասխանատու են միայն նրա առաջ: Իսկ փոխանորդներին անկախութիւն են հոգեւոր կառավարութիւնները՝ համաձայնաբար աւելի լայն իրաւունքներով:

Մասնաւորելով մեր խօսքը երեւանի թեմի վրա, կրկնում ենք, որ երեւանի թեմակալը կաթողիկոսն է (1165): Երա հինգ փոխանորդները ստորագրելով են առանձին-առանձին կաթողիկոսին, իւրաքանչիւր իր վիճակի համար պատասխանատու մնալով: Օրէնքը երեւանի փոխանորդի վրա չէ դնում պարտաւորութիւն միւս վիճակների մասին հոգալու: Բայց որովհետեւ այդ պարտաւորութիւնը ստանձնել են երեւանի փոխանորդները, այդ պատճառով էլ առաջ է դալիս հարց, թէ միւս փոխանորդները առաջնորդական փոխանորդներ են, թէ փոխանորդի փոխանորդներ, որը կապ ունի ներկայ քառս դրութեան հետ:

Եթէ մեզ հարցնէին, թէ ինչպէս կարելի է վերացնել այս քառս դրութիւնը, մենք կառաջարկէինք. հետեւել վարչական բարեփոխութիւնը: Ինչպիսի թոյլատրութիւն երեւանում հիմնելու մի հոգեւոր կառավարութիւն եւս իր փոխանորդով՝ երեւանի վիճակի համար, կօստիստօրիան փոխադրել էլ միմիայն՝ նշանակելով վարչապետ անդամներ մի նախանգամով՝ կաթողիկոսի անմիջական իրաւասութեան տակ, եւ այն ժամանակ օրէնքի համաձայն՝ հոգեւոր կառավարութիւնները կենթարկվին կօստիստօրիային, իսկ փոխանորդները՝ կաթողիկոսին: Մեր կարծիքով սա կը լինէր ամենաուղիղ ճանապարհը:

Մեզ համար հետաքրքրական է լսել յարգելի սարկաւազի կարծիքը, արդեօք ներկայում իր յօդուածի մէջ յիշած արտօնութիւնը տալով երեւանի փոխանորդին (նախագահ կօստիստօրիայի)՝ նա իրաւունք ունի անկախ կօստիստօրիայից գրագրութիւն ունենալ եւ հրամաններ արձակել միւս փոխանորդներին, կամ առանաբար փոխանորդները պէտք է վարեն գրագրութիւն առաջնորդների հետ՝ անկախ հոգեւոր կառավարութիւններից:

Իսկ դատելու կերթում, ղուրը կընիմ, թեաք մի ծախք Մարալու ու Խնձորա...

Ի՞նչ անէ խնձ ատարուն, իր էլ սրտինքն են քաշում, բայց տանք հաց են ուղում, իսկ պանդխտի ցուպն առած հաց վաստակելու գնացած որդիքն էլ դեռ ոչ փող են ուղարկել, ոչ խաբար...:

Է՛հ, որ մի սրտակուտը դէպքը նկարագրես ու որ մէկի սեւ օրը լսաւ Ի՞նչ անես, քանի որ բնութեան օրէնքն անողն է: Տեսնում ես, մեղանում ձմեռ է, սար ու ձոր ամալի, մի այլ տեղ գարուն է, դաշտ ու ձոր դալար: Մի եւ նոյն եկեղեցում, շատ անգամ հէնց նոյն իսկ միաժամանակ (մեր գիւղերում) կատարվում է մէկի ծննդեան հանդէսը, միւսի հոգեհանգիստը...:

Բարեկենդան է: Առաւօտ վաղ, դեռ արեւի ծէպն Արուլի ետեւից նոր ընկել է աների կատարին: Մէկը միւսի ետեւից բացվում են խառնութիւններ: Ժամ առ ժամ կենդանանում է քաղաքը: Բայց ոչ առաւօտը անողներով, մուշտարիններով, ոչ Փողոցում, պատերի տակ խոնկում են 6—20 տարեկան փողոցային ու դպրոցական մանուկներ ու պատանիներ: Փող են խաղում նրանք՝ «խուճար»: Դա մեր քաղաքի սովորական ժամանակ անցկացնելու միջոցն է, իսկ բարեկենդաններին՝ գրեթէ պարտադիր պարադմունք ամենի համար: Փողերի «խուճարազններ» ծնողներն ու մեծերը երէկ

րութիւններից. եթէ կարող են՝ ինչու, եթէ չեն կարող՝ ինչու:

Մենք կը ցանկայինք լսել եւ փորձառու իրաւագէտների կարծիքը այս խնդրի մասին:

Բացի այս իրաւաբանական հարցը, յարգելի սարկաւազը ուշադրութեան է առել եւ մի այլ հանգամանք, իբր թէ մենք մեծ հաւատք ունենք նոր վարչապետների մասին. մինչդեռ մեր յօդուածը այդ իմաստը չունի. բանաստեղծը վաղուց է ասել. «Բնութիւնից խելագործիկն Պետրոսը բոլոր խելք չի տալ»: Մենք միայն պահանջել ենք, որ նորերը արդարացին իրանց վրա դրած յոյսերը. չենք կասկածում, որ հէնց սարկաւազը կը նեղանար մեղանից, եթէ իրան՝ ապագայ կրթված վարչապետին, մի գծի վրա դրենք տղէտ վարչապետների հետ, եւ միմիայն յանցանք է, եթէ իրանք իրանց վրա մեծ կարծիք ունեցողներից աւելի սպասենք, քան միւսներից, որոնք երբեմն ակամայից կուլ են տալիս նորերի թունալից պիլիւնները:

X.

ՕՊԵՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Մեծ պատի գաստրօլ-ներկայացումների սկզբից լրագրիներում եւ ամփոփումում յայտարարվեց, որ, ի միջի այլոց, հրաւիրված է կօստիստօր-սօպրանո Լուիզա Տետրացիին: Այդ համաշխարհային հնչակուր անունը այնքան հետաքրքրել էր հասարակութեանը, որ նա մեծ բազմութեամբ եկել էր թատրոն երկուշաբթի, ամսիս 12-ին, Դոնիցէտտի «Լուչիա դի-Լամբերտ» օպերայում տեսնելու նորեկ հիւրին, որ կատարում էր Լուչիայի դերը: Այս օպերան Դոնիցէտտի յատկապէս այդ դերի համար է գրել եւ նրա մուգիկան աչքի է ընկնում զուտ իտալական ոգիով եւ կլասիկական ընտելութեամբ: Գործողութիւններից ամենանշանաւորն է 5-րդ պատկերը, ուր Լուչիա դուրս է դալիս խելագարված: Այդ տեսարանում, չը նայած որ ներկայ են լինում խումբը եւ ուրիշները, ամբողջ ժամանակ երգում է միմիայն Լուչիան, որի դերը գրված է գեղարուեստական վերին աստիճանի կատարելութեամբ: Լուիզա Տետրացիին այդ արտաքույ կարգի միլլիգնատիկ երգը կատարեց ամենայն ճշգրտութեամբ եւ ամենամեծ նրբութեամբ: Իսկապէս այստեղ բոլորականութիւն արտայայտող երգ չը կայ, այլ կան միայն սոխակային վարիացիաներ: Հէնց կօստիստօր-սօպրանոյի հմտութիւնն էլ նրա-նումն է, որ դրանով մրցէ իրաւագէտական գործիքի հետ: Տետրացիին ամենաբազմակողմանի կերպով մրցեց flauto ֆլէյտա գործիքի հետ, եւ, կարծես, միշտ յաղթում էր՝ երեւելիները աւելի լաւ կատարելով, քան ֆլէյտան:

Նրա կատարած legato—սահուն մանրանօտաները ամենանուրբ պիանիսսիմօ ժամանակ էլ որոշ լուծում էին: Բայց ամենից լաւ էին նրա staccato—ընդհատ նոտաները, որոնք մարդարտի պէս փայլում էին թաւային երաժշտական ֆօնի վրա: Ձայնի ամեն մի նոտան առանձին բաւականութեւն էր պատճառում իր պարզութեամբ եւ տեմպով: Մի բան միայն աչքի է ընկնում, այն է, որ երգչուհու ձայնը շատ մեղմ է, բայց դա չէ խանգարում

իրիկանից դեռ ուռած ու կարմրած աչքերով նստած են սեղանի շուրջը...

—Ի՛նչ, մի մի արաղ տուէ՛ք:

Ձը կարծե՛ք, թէ մեր բաղադարները հէնց նոյն իսկ իրանց այդ երվանիկ րօպէին չէին յիշում նեղեանքներին: Գրեթէ ամենքն էլ բարեմաղթութիւնների վերջը աւելացնում էին՝ «է, ուրախ եւ որ մէ նեղեանք, հիւանդամ, աղքատներ կայ՝ էնոնց ա Աստուծո՛ւ հանիր»:

Արաղն արաւ իրանը. չորս կողմից քաղցած դալիքի պէս թափվեցին սեղանին:

Առաւօտ է: Վաղորդեան մատաղ արեւն էլ կարծես նախանձում էր մեր քաղաքացի բաղդաւորներին ու իր շնչատակի ճառագայթները նետել էր ներս պատուհանից: Բայց սակի ա-րեւի պայծառ ճառագայթների հետ ներս էր մտել եւ մի սեւ ու հաստ շերտ:

Դա պատուհանի առաջ, արեւի դէմ կանգնած գեղջուկ ծերուկի սեւ շուքն էր: Վիզ ձկած, դաղորդուն ձնոտիքը յենած հաստ մահակին, նա իր արհեստ-արցունքոտ հայեացքը ետեւել էր «աղաների» փարթամ սեղանին: Լուռ էր: Նա ոչինչ չէր ասում, բայց հէնց այդ լուռութիւնն աւելի շատ քան էր ասում, քան պիտի կա-րողանար սակ նուազած ծերուկը, եթէ բանար դարձնէր: Բայց, հայուս, ինչ ուղում նա, կա-րած ու ձու, խորակի ու ձուկ չէր խնդրում նա... հաց... գարի, չոր, սեւ հաց, միայն մի կուշտ փոր հաց բարեկենդանին, գէթ մի օր,

ուպաւորութեան, որովհետեւ Տետրացիին իր գեղեցիկ շկայով ուժեղացնում եւ մեղմաց-նում է ձայնը՝ պահանջվածի համեմատ:

Կարա-Մուրա

ՆԱՄԱԿ ԽՐԱԿԱՐՈՒԹԵԱՆ

Երեւան, մարտի 2-ին
Հետեւելով գրականական էթիկային, «Մը-չակի» 31 համարում արձանագրելով մի հար-սանիքաւոր մէջ կատարված տեղիս երգուեստ-հաւատարմատարներից մէկի քաջագործութիւ-նը, այն է մի խնդր կառապանի գլուխը փայտի հարուածներով պատռելը, անյարմար գտանք տալ նրա անունը, միշտ սկզբունք ընդունած լինելով խնդիրներին չը տալ մասնաւոր եւ անձնական ընտելութիւն, այլ, որքան կարելի է, հարցերը չօգտիւն ընդհանուր կերպով, հա-սարակական նշանակութեամբ: Սակայն ի՞նչ կարող էք անել, երբ ձեր սկզբունքը խախտել ստիպում են մարդիկ, որոնք եւ մեղադրվում են յանցաւոր արարքի մէջ:

Փետրվարի 5-ին, մի հարսանիքաւոր մէջ կառապանի գլուխը փայտի հարուածներով պատռող եղել է երգուեստ հաւատարմատար պ. Գ. Մնացականեան. այս բանին ակնատես են եղել ահադին թուլ հարսանիքաւորներ, այս բանը գիտէ երեւանի ամբողջ հասարակու-թիւնը, բայց եկէ՛ք ու տեսէ՛ք, որ նոյն պ. Գ. Մնացականեան հրապարակ գալով, «Մշակի» 44 համարում ըրողովին ուրանում է այդ տեղը դէպքը եւ այդ աւելի համոզեցողիչ դարձնե-լու համար՝ փաստաբանական մի մասն ու վր է կատարում ասելով, թէ իբր ես եւ իմ ըն-կերները վերջին տարիներ մի շարք թղթակ-ցութիւններով աշխատում ենք արտաստարել նրա պատիւը, հաղորդում ենք նրա մասին կեղծ փաստներ եւ այլն:

Պ. Մնացականեանի անձնական յատկու-թիւնների մասին խօսելը նոյնպէս գրականա-կան էթիկային դէմ համարելով՝ մի բանի խօսք կասե՛ք միայն նրա յարձակման առթի-թով եւ նրանից երես կը դարձնենք:

Նրա այն խօսքերը, թէ իբր մենք մեր ըն-կերներով աշխատում ենք մի շարք թղթակ-ցութիւններով նրա պատիւը արտաստարել, զրպարտութիւն է, եթէ երբեմն-երբեմն այս կամ այն հասարակական խնդիրը չօգտիւնի՝ դուրս են բերվել օրիգինալ տիպեր, ով է յանցաւոր, որ պ. Մնացականեան իրան է վերադարձր այդ: Գաղտնի այն խօսքերին, որ նա իրան ան-պատուաբեր է համարում մեղադրանքի հետ բանակուր մանիւ, այդ խօսքերի արժէքը իմա-նայու համար բաւական է այն փաստը, որ «Մշակի» 31 համարի թղթակցութիւնը լոյս տեսնելուց յետոյ՝ նրա խօսակցութեան առա-կան մեր անձնաւորութիւնն ու մեր պաշտօնն է եւ անընդամս մեր ակամային հասնում են ոչ միայն նրա անվերջ հայեցումները, այլ եւ սպառնալիքները:

Մենք հայեցումներին պատասխանելու սո-վորութիւն չունենք, իսկ պաշտպանվել իւրա-քանչիւրի իրաւունքն է:

Ա—Դօ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Երէկ, մարտի 13-ին, Թիֆլիսի Դատաստա-նական պալատի քաղաքացիական բաժնում նշանակված էր ժողովրդական լուսաւորութեան միջնորդութեան եւ Բագուի Հայոց Մարդա-սիրական ընկերութեան մէջ եղած կալուածա-կան վէճի քննութիւնը: Այդ գործը, ինչպէս

մի անգամ իր բալիկներին, թոռնիկներին հետ...

—Բոլս (մօտա) խուրաւ էլ չը կայ, ահա՛ն ծն, տար իսիկ, տուր խորը՝ էրթն, խեղճ մարդ է... Կանչեց ծառային տանաէրը ու տուեց մի ժանգոտած կօպէկանոց...

Մանուկ «խուճարազններ» դեռ պղծած են պատերի տակ, նրանց կօպէկները դեռ չեն վերջացել, է՛հ, ինչ փողթ, թէ վերջանալ էլ՝ սաղ լինի հօր «գաղաթը», մի կերպ կը «ծրկացնէ»: Խանութպանները նոյնպէս դեռ պարապ կանգնած են: Բայց չարսուն (մեծ փողոցը) լիքն է բազ-մութեամբ: Տխուր, յամր ու դանդաղ շարժուից վեր ու վար, ձիւնախառն ցիխի միջով, չըլում են խումբ խումբ գիւղացիներ, 15 տարեկանից մինչեւ 60 տարեկան արեւաւոր մարդիկ: Նրանց դուռնաւոր ձակատին կարծես գրոշմված է յու-սահատ տաղանալի օրհասական կնիքը: Գործ են որոնում, մի պատառ հացի վաստակ փնտ-րում, որ երեկոյան մի բուռը ալիւր կամ մի կտոր հաց տանեն տուն... Բայց գործ չը կայ, գործ չը կայ նոյն իսկ քաղաքացի խանութ-պանների համար: Ժողովուրդը քաղցած է, ով պիտի անօթի փորով առեւտուր անէ, Լուռ է չորս կողմը, լուռ է նոյն իսկ այդ խումբ ամ-բողջ, կարծես բարեկենդան չը լինի:

Բայց ահա հեռուից թառ ու քեմամանու գլղոցը եւ զիլ «բալաթիւն» տխուր մղկոցը օղը թնդացրին: Ամենքն ակամայ աչքերն այն կողմն են դարձնում: Մեր քաղաքի «պատաւա-

իր ժամանակին հաղորդված էր «Մշակում», Բագուի նահանգական դատարանը վճռել էր յօդու Մարդասիրական ընկերութեան եւ ան-ցիլ էր պալատը միջնորդութեան ներկայացուց-չի բողոքը: Դատաստանական պալատը երէկ գործի քննութիւնը յետաձգեց ժողովրդական լուսաւորութեան միջնորդութեան իրաւագէտ պ. Մամոնտովի խնդրիցով այն հիման վրա, որ նոյն կարգի բոլոր գործերի վերաբերմամբ սպասվում է լուսաւորող կարգադրութիւն: Նոյն հիման վրա յետաձգված է եւ Ախալցխա-յի եկեղեցական կալուածների գործը, որոնք նոյնպէս գրավել էին միջնորդութեան կողմից, իբրեւ զրպրոցապետական եւ որոնց վերաբեր-մամբ Թիֆլիսի նահանգական դատարանը ի-րաւացի էր ձանաչել հայ լուսաւորչական հո-գեւոր կառավարութեան պահանջը:

Նօյրուզ-Բայրամի տօնի առիթով, ինչպէս հաղորդում է «Нов. Обозрѣніе» լրագիրը, Ա-մինայն հայոց կաթողիկոսը նորին մեծութիւն Շահին չնորհաւորական հեռագիր ուղարկեց, որին պատասխան Նորին Վեհափառութիւնը ստացաւ հետեւեալ հեռագիրը:

Թիֆլիս. Նորին Սրբութիւն Ամենայն հայոց կաթողիկոսին:

«Յայտնում եմ չըբմ չնորհակալութիւնս Ձերդ Սրբութիւնից Ձեր բարի մաղթանքների հա-մար, որ յայտնել էք Նօյրուզի առիթով եւ նոյնպիսի մաղթանքներ եմ յայտնում Ձեր թան-կագին կեանքի պահպանութեան համար: Ես շատ լաւ յիշատակ եմ պահում էլ միմիայն կա-տարած այցելութեանս մասին:

Մուգաֆֆար էղդինս:

Նորին Վեհափառութիւն Ամենայն հայոց կա-թողիկոսի հեռագիրը հետեւեալ բովանդակու-թեամբ է եղել:

«Թէհրան. Իրանի հզօր Վեհապետ նորին մե-ծութիւն Շահնշահ Մուգաֆֆէր էղդինին:

Շնորհաւորում եմ Ձերդ մեծութեան Նօյ-րուզ-Բայրամը, աղօթելով Ամենաբարձրեալին չնորհել Ձերդ մեծութեան եւ ամբողջ արաք-յական ընտանիքին առողջութիւն եւ երկու օ-րեր՝ ի փառս Իրանի եւ ի բարօրութիւն Ձեր հպատակների, որոնց համար յարգված եւ օրհն-ված Հայր էք Դուք:—Մկրտիչ Կաթողիկոս Ա-մինայն Հայոց»:

Երկուշաբթի, մարտի 12-ին, Թիֆլիսի ար-տիստական ընկերութեան թատրոնում տեղի ունեցաւ Իւսէնի «Երբ մենք յարութիւն կանենք ի մեռելոց» պիէսի ներկայացումը: Գլխաւոր դերակատարն էր յայտնի դրամատի-կական դերասան Դաւիթը, որ ներկայացնում էր պիէսի գլխաւոր հերոս, քանդակագործ Բը-րէկին: Հասարակութեանը դրաւել էր պիէսը չնորհիւ նրա հեղինակի ունեցած համաշխար-հային հռչակին: Իրաւն այդ պիէսի մէջ դժա-գրել է մի քանի գաղափարներ, որոնք օա-կայն այնքան որոշակի եւ մատչելի կերպով չեն ձեւակերպված, որ կարելի լինէր անլի-ճելի կերպով ընդունել գործող անձերին եւ հեղինակի հայեացքները: Այդ պիէսը. եւրօպա-կան բեմերի վրա ներկայացվելուց յետոյ, առիթ

ւոր իշխաններն են դրանք, մի խումբ «աղա-ներ», որ հարանաւորից նոր վերկացած՝ դիշիւ-րան փարթամ զէֆն այժմ վերջոյնմ են շա-րունակում: Յամր ու դանդաղ առաջ է դալիս մեծաշուք աղաների հանդիսաւոր թափօրը, որի հերոսները, իրանց յատուկ վեհութեամբ, գէթ առաջներից ելել չընկնելու համար ան-գամ ներքեւ չեն նայում: Բայց նրանք տեսան իրանց շուրջը խոնկող մանր ու խուրդ գիւղա-ցիներին, տեսան ու երեւի խեղճերի նուազած հայեացքից հասկացան նրանց փորի անօթու-թիւնը եւ այն՝ բարեկենդան օրով Հասկացան եւ կարեկցեցին... Ախր գիւղացիներ են դրանք, համա ինչ կուղէ լինի՝ էլի «մարդ են»:

Թափօրը կանգնեց մի մեծ խանութի առաջ: Առատաձեւ «աղաներ» ողորմութիւն պիտի անէին քաղցած ամբոխին. բարեգործի ինքնա-բաւական ժպիտն երեսներին՝ նրանք մի-մի բուռ «կանֆէտ» վերցրին ու շաղ տուին իրանց չըրպապետող գիւղացիներին: Ցեխ ու ձիւնի մէջ գուլուկվեցին գիւղացի մանուկները, ճիչ, աղա-ղակ, տուր ու դարձու...:

Հրաշալի կարեկցութիւն...

Ձը գիտե՛մ, Ամերիկայի կամ Աֆրիկայի կու-սական անտառների խորքերում գոյութիւն ու-նի արարածների այսպիսի մի ցեղ... Կար-ծեմ ոչ:

Ջաւախեցի

է տուել հակառակական քննութիւնները: Մի ուրիշ անգամ կաշխատենք խօսել այդ պիէսի մասին:

«НОВОСТИ» լրագիրը հաղորդում է, որ պետական խորհրդի հաստատութեան է ներկայացրած մի միջնորդութիւն, որով 30,000 ռուբլու նպաստ է խնդրուած յօգուտ Մոսկվայի կայսերական հնագիտական ընկերութեան՝ Կովկասի եւ Արեւելեան Սիբիրիայի վերաբերեալ հետազոտութիւնները հրատարակելու համար:

Այս օրերս, «Вестник» լրագրի խօսքով, ուղղափառութիւն են ընդունել եւ մկրտվել են Միթամիդայի ս. Դաւիթ եկեղեցում մի մահմեդական աղջկէ՝ Սայատա-Սալէկ-ղզը-Հուսէյնով, եւ հայ-լուսաւորչական տիկին Մարգարիտ Դերկանովա ու օրիորդ Մարգարիտ Մկրտչեան:

Արիօնօլիզմի դէմ կուրու համար կազմված յանձնաժողովի նախագահ բժշկապետ Նիժնի-յոզեֆ, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, հաղորդեց, թէ ֆինանսների մինիստրը կարգադրել է, որ այսուհետեւ ի կատար ածվին գիւղական համայնքների այն վճիռները, որոնցով նրանք արգելու են, որ իրանց գիւղերում բացվին արքունական դիւնստներ:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ, «Одес. Нов.» լրագրի ասելով, քիչ ժամանակ առաջ բարձրացրած է մի կարեւոր հարց՝ թող տալու այն անձներին, որոնք աւարտման վկայական չունեն համալսարաններից, քննութիւն ընելի պետական մասնաժողովներում, իբրեւ էքստերններ: Այս հարցը կատարելագոյն լուսաւորանելու համար, մինիստրութիւնը դիմել է բոլոր ուսումնական համալսարանների վարչութիւններին՝ խնդրելով յայտնել իրանց կարծիքները այս խնդրի մասին:

Նախնայի միջոցով Ռիբինսկից Պետերբուրգ հասնող տեղափոխելու գիծը անցկացնելու եւ չափազանցելու համար՝ ակցիօներական ընկերութիւն է հիմնվում «Նախնայ» տեղափոխելու ուսաց կոմիտէի նախնայ ընկերութիւն» անունով:

ԱՍՍՈՒԱԲԱԴԻՑ մեզ գրում են. «Մեր թեմի առաջնորդ՝ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանը մի գրութիւն է ուղղել այստեղի հայերի տոնուտէր պ. Աւ. Աղապետեանին, ի պատասխան վերջինիս գրած մի գրութեան, որը վերաբերում էր մեր երկու քահանաներին ուղղել նշանակելու հարցին: Այժմ սրբազանը յայտնում է իր վերջին համակրութիւնը եւ առաջարկում է ընտրել մի մասնաժողով նախագահութեամբ պ. Աղապետեանի, որպէս զի այդ մասնաժողովը մշակէ մի ծրագիր՝ ծխականների վրա տարբեր նշանակելու եւ այնուհետեւ հաւաքված գումարից ամէն ամիս քահանաներին թոյակ վճարելու համար: Յուսով ենք, որ գործը շուտով զրուխ կը գայ եւ մուրադակատութիւնը կը վերջանայ քահանաների միջոցով:

ԿԱԶՈՒԱՆԻՑ մեզ գրում են. «Մարտի 8-ին Կարսից այստեղ ժամանեց Կառավարչապետի օգնական պ. Յրէզէն Դիմաւորեւը էին գնացել տեղիս պ. պ. Գաւառապետը, ոստիկանապետը, կողակները մի խումբ եւ բազմաթիւ հասարակութիւն»:

ՂԱԼԱԲԻՑ մեզ գրում են. «Ղալաբի Ղարաշալի հայաբնակ գիւղում աստիկ տարածված են երեխաների հիւսնութիւններ, որոնք մեծ մասամբ վերջանում են մահով: Այդ պէտք է վերադարձնել թէ գիւղացիների տղիւնութեան եւ թէ բժշկական օգնութեան բացակայութեան: Այդ գիւղում չկայ նոյն իսկ մի ֆէլիչը, որը շատերին կորուզ էր ազատել մահվան ճիւղից: Ղալաբիում էլ հիւսնութիւններ շատ կան, բայց բարեբախտաբար մահ չի տեսնուում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՅԱՐԱՄԻԱՅԻՑ

Պարիզ, մարտի 14-ին

Փրանսական արդարութիւնը վատութիւն մը աւելի գործեց՝ օր. Վէրա Ժիլօյի ու օր. Ջէյէ-Նիւայի խնդրագիրը մերժելով: Իրաւ է թէ՛ այն քանի մը բռնաբարութիւնները՝ որ արդարութիւնը (?) ասոր անոր ցրվելու պաշտօնը

ունեն եւ որոնք իրապէս ուրիշ բան չեն, բայց եթէ բուրժուազիային վրէժնորդութեան գործիքը՝ փոստը, քայքայված ու անբարոյական ընկերութեան մը որոնողութիւնը՝ այն քանի մը թանձր բուրժուազիները՝ որ մեծ գողներն են, մեծ ոճրագործներն են, մեծ յանցապատճառներն են համար այնքան խանդաղատեալ, այնքան յարգանք ու այնքան գոթ ունեն եւ որ կատարութեան, ատելութեան եւ զայրոյթի կը դողդողան անժառանգներուն, անօթութեան՝ անտարակամ՝ պղտիկ հայ մը գողցողներուն առջեւ, երէկ՝ այդ պատուական բուրժուազիները՝ Սէն-Լազարի բանտին մէկ անկիւնը չարչարող դժբաղդ Վէրա Ժիլօյին ու Օթէլ-Տիէօյի հիւանդանոցին մէջ ամեն օր, ամեն վայրկեան քայլ մը աւելի մահվան մօտեցող խեղճ, բարի Ջէյէ-Նիւային վերջին պաղատանքը արհամարհելով՝ իրենց առաջին վատութիւնը չէ որ գործեցին:

Ասիկա այն արդարութիւնը չէ, որ Պանս-մայի վիթխարի գողերը՝ դաժնուի մը պէս անմեղ հուշակեց, հաղաներու մէջ այս ծանօթ մի թիւրք օրինակով եթէ ուզենք բաւականանալ:

Բայց դիտե՛ք, թէ ինչ «նկատուով օր»-ներու վրա լինած՝ այդ արդարաբանքները մերժած են օր. Վէրա Ժիլօյն ազատ արձակել:

Անուստիկ այդ անիմաստութեան գրուած գործերը՝ «Թէ՛ Վէրա Ժիլօ, օտար ազգութեան պատկանելով՝ Փրանսայի մէջ ոչ մէկ բնական տեղի ունի, թէ այս հանգամանքն ու իրեն վերագրված յանցանքն ընտելեան պատճառաւ, կարիք կայ վախճալու, որ անիկա փախուստ չը տայ իրեն դէմ ուղղված դատական հալածանքները:

«Թէ՛ միւս կողմէ, առժամանակեայ ազատ արձակումը կրնայ ծանր անպատեհութիւններ յառաջ բերել՝ իր մտային փրկելու քննող երեք բժիշկներու կարծիքին համեմատ, որ զինքը դիւրաբար ջլատուար մը յայտարարած են»...

Թէ՛ ուսումնական ընկալողի չունի Փրանսայի մէջ, թէ ջլատուար է, ասոնք այնպիսի նկատողութիւններ են, որոնց վրա չարժէ վայրկեան մը նոյն իսկ կանգ առնել: Մը-տածում մը այս հեղաշրջող ողբերգութեան վրա տրորելի կիշխելու են միայն պէտք էր առաջնորդէր դատաւորներուն վճիռը—օր. Ջէյէ-Նիւայն մահամեծ է, Պարիզի մէջ՝ զինքը՝ իր գուրգուրանքով, իր անձնուրոյթութեամբ արիւն-փող մէկը չունի, ու եթէ ան վաղը մեռնի, բարեկամ ձեռք մը չը պիտի գտնվի, որպէս զի անոր աշուրները փակէ: Դատաւորներու մտածումը պէտք է այդ ոգեւորող դժգոյն ու անբարոյ աղէկան դառնար: Բայց եթէ գոթ ունենային՝ դատաւոր չէին ըլլար: Օր. Ջէյէ-Նիւայի վրէժնորդ շատ ծանաբացած է արդէն, ու օրէ օր անոր մահվան կը ապաստի: Օր. Վէրա Ժիլօ երէկ իրեն այնպիսի նորէն, բայց երկու բարեկամութիւններ՝ յօգուտէ խեղճված՝ հազիւ քանի մը վայրկեան կրցի են տեսակցել:

Ինչ կրնային ըսել երկու այլապէս դժբաղդ աղջիկներն իրարու, իրենց անասման ու անսիրտիկ ցաւին խորքին, որուն մէջ ընկղմեց զիրենք եղբերակական ու խորհրդաւոր ճակատագիր մը:

Օր. Վէրա Ժիլօյի ի նպաստ միջնորդ Մոս-մարտի Սէնտ-Իգոր փողոցին մէջ տեղի ունեցած: Սրանք լեի լեցուն էր՝ երբ Իւոպէն Կօնիէն անկնդիրներու խնդրակո ծափերուն մէջէ խօսք առաւ: Երկու հազար հոգի Պարիզի չորս կողմերէն վազած եկած էին բողոքելու համար արդարութեան ձգձգում ու չի ընթացքին դէմ ու պահանջելու ոչ թէ զթուփիւն, այլ արդարութիւն, ամբողջ, կատարեալ ու ձգձարեալ արդարութիւնը ուսումնականութիւն համար:

Սրանք հանդարտելուն պէս՝ Կօնիէ ըսաւ. «Դիւէֆուսի խնդրին տաք վայրկեաններուն մեղի մեղադրեցին, թէ այս անձով կը զբաղուէինք անոր համար, որ անիկա հրէայ էր ու միջնորդները:

Մենք զանիկա կը պաշտպանէինք, որովհետեւ անմեղ էր, որովհետեւ այն մեղքնայութիւնները, որոնց զոհ էր՝ կղերին ու պրետորականին կողմէ ներթափած էին:

Բայց անիկա սկզբնաւորութիւն մըն էր միայն: Մենք պարտք առինք վրանիս կրկնելու միւս նոյն ճիգը մշտնջենապէս Բոնեցինք մեր խօսքը ու պիտի ընենք զայն ամեն օր:

Վէրա Ժիլօյի խնդրին չափական կողմերէն մէկին ալ այն է, որ ուղղակի օտարին հետ առնչութիւն ունի: Օտարները՝ այս խնդրին մէջ դէմ դիմաց կը գտնվին Փրանսական

հանրապետութեան իրողութիւններու հետ: Անոնք կրնան տեսնել՝ թէ այս ժողովուրդը, որ այնքան հպարտ է յեղափոխութիւնը կատարած ու Պասթիւր կործանած ըլլալուն՝ ճիշդ մի եւ նոյն տեղը կը գտնվի, ուր էր առաջ, այսօր ազատ է այնքան, որքան իր նախնին ընթացիկ տակ:

Օր. Վէրա Ժիլօյի խնդիրը կը ինչնէն արդարեւ իր շատ մը նմանութիւններով այն՝ ինչ որ կանցնէր կը դառնար յեղափոխութիւնէն առաջ:

Երբ կին մը իր էրիկը կը նեղանայ՝ էրիկը զայն բանտարկել կուտար: Լուսօփիկոս XVI-դ իր կիններէն մէկուն կողմէ ճանչցուած ըլլալուն համար՝ խեղճ նետեց Պիսէթը՝ խնդրելուն մէջ: Նոյն բանը աշխատեցան ընել օր. Վէրա Ժիլօյի նկատմամբ:

Սպանութեան փորձին հետեւեալ օրը՝ «Էք-լէ-սը» Դէշանէլ ընտանիքին պաշտօնական լրագիրը՝ ըսաւ, որ երիտասարդ ոստիկան խելագար էր:

Եղանակը դիւրին էր, բայց բաւականացուցիչ չերեցաւ:

Դէշանէլ հայրը՝ իր դասախօսութեան սրահէն դուրս կուգայ: Ջէյէ-Նիւայի պայթիւն մը կը լսէ, արիւնշուայ, երիտասարդ աղջիկ մը կը տեսնէ գետինը փռված՝ ուրիշ մը սարսափելի ջղապրտութեան մէջ: Գրեթէ մարմիններուն վրայէ կոխկողել անցնելու էր, մինչեւ իր կտուքը գնաւուն համար: Ու քառասուն եւ ութը ժամ յետոյ կը պնդէ, թէ տեսարանն ըստ մը չէ հասկացած ու երկվայրկեան մը նոյն իսկ տակն ու վրա չէ եղած անկէ: Սոսկ փորութեան համեմատ արգասեակ խմբ ու իր կէսօրվան ըստը քաշել է:

—Ինչ տարօրինակ կին սա երիտասարդ աղջիկները, ըստ է իր կնոջը դաժնալով:

Բանը բանէն անցնելէն ետք, բարեկամ լրագրի մէ խմբագրին եղած այս պատմութիւնը, զոր հեղինակը չէր հաճած նոյն իսկ հարցազննիչ դատաւորին ընել ինձի չափազանց ճարտար երեւոյս:

Աւելի տարօրինակ կայ տակաւին Տաւնը հինգ օր ամբողջ՝ դատաւորը չը կրցաւ օր. Ջէյէ-Նիւայն՝ դէ՛, տեսնել: Հարցազննութիւն մը զայն կրնար սպանել: Եւ սակայն այդ 15 օրվան միջոցին, Դէշանէլ ընտանիքը զանիկա կը տեսնէր ամեն օր, անոր կը բերէր ծաղիկներ, չաքարեղէններ, օսկէ մեղալ մը ու չը գիտէր ինչեք արդեօք տակաւին: Ոստիկանական լեզուով ասոր կըսեն վկան է փել:

Դատաւորէն ու փաստաբանէն զաղտու ու չէ նոյն իսկ ամբաստանալը երկեցին բանտին մէջ:

Օր. Վէրա Ժիլօ ֆրանսերէն երկու տող անխալ գրել չը գիտէ: Մանօթներու հետ հաղորդակցելու համար դատաւորին թոյլտուութիւն խնդրած ատեն՝ իր փաստաբանին կը դիմէր միշտ Վէրա Ժիլօ ստորագրված ու Դէշանէլ հօրը հասցէին իւր քաղաքի չիւրը ու թը երեսնոց երկու նամակ մէջտեղ եւ լան սակայն, որ ակադեմական ֆրանսերէնով մը խմբագրված են:

Ո՞ր տուն տուաւ զանոնք:

Տիւֆօ կամ Գասթիլօն փողոցի խոփոծ ստահակը՝ եթէ ու եւ է պ. Տիւսան մը եղած ըլլար, այս ամէն նախադրուածութիւնները ձեռք պիտի առնվէին միջէ:

Բայց, պիտի ըսէք, ինչու օր. Վէրա Ժիլօ ամէն բան չի յայտնել: Կորով ցոյց տուաւ ու նկարագրի պէտք է որ ունենայ:

Ա՛հ, անոր համար որ ամեն միջոց ձեռք առնուած է, որպէս զի զանիկա լեցնեն:

Ունկնդիրներէն մէկը պոռաց:

—Ամօթ է:

—Այն ամօթ է, շարունակեց կրակոտ ատենանքը, բայց կը կարծեք որ, նորէն կը կերկնեմ, եթէ խնդիր հասարակ ընելով վաւաչողի մը վրա ըլլար՝ այսքան միջոցներ ձեռք առնէին:

Օր. Վէրա Ժիլօ կամ անմեղ եւ կամ յանցաւոր է: Առաջին պարագային պէտք է զայն ազատ արձակել անմիջապէս: Երկրորդին պէտք է զայն հանել երգուեալ դատաւորներուն առջեւ:

Հին ու հին միայն պիտի կրնայ ըսել խեղճ ամբողջ ճշմարտութիւնը: Բայց ոչ մէկը եւ ոչ միւսը կընեն: Չին ուզեն որ անիկա հասարակութեան հետ չօշափման մէջ գտնվի: Ու ինչու չեն ուզեն, եթէ անիկա իրաւունքն սխալեցաւ:

Երբ Կօնիէ իր խօսքը աւարտեց, ծափահարութիւններու եւ համակրական աղաղակներու փոթորիկ մըն էր, որ բարձրացաւ սրահին մէջ, որ պերճախօս կերպով ցոյց կուտար, թէ համարում է ատենաբանին:

Կօնիէն յաջորդեց ուրիշ ատենաբան մը, որ ծանրացաւ արդարութեան վարանուններուն,

ձգձգումներուն, դիտմամբ գործած անկանոնութիւններուն վրա ու սա շատ նշանակալից նախադասութեամբ աւարտեց:

—Եթէ օր. Վէրա Ժիլօն ազատ չարձակվի եւ կամ չը դատուի, իրաւունք պիտի ունենանք հրապարակելու անունը անոր՝ որ զայն նախատեց ու անպատեց:

Այնուհետեւ սա օրակարգը քուէարկվեցաւ: «Սէն-Իգոր փողոցը» հաղորդական ընկերութեան սրահին մէջ՝ եւսաքոված 2 հազար քաղաքացիներն ու քաղաքացիները կը հրաւիրեն ատենակալութիւնը Վէրա Ժիլօյի խնդրին մէջ իր պարտականութիւնը արիւթեամբ կատարել ու կը պահանջեն կատարութիւնէն, որ ամբաստանեալը հրապարակաւ դատուի թոյլ տայ եւ կամ անմիջապէս ազատ արձակէ:

Յ. Գ. Ժողովրդական բողոքը իր անմիջական արդարեւը ունեցաւ: Խօսք կայ, թէ օր. Վէրա Ժիլօ դատի պիտի քաշուի մօտ օրէն՝ ամբաստանիչ ատենանը զայն երեւոյթաւ ատենին առջեւ զրկած ըլլալով:

Տիւրան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԿԵՐ

«Daily Graphic» լրագիրը պնդում է երեքսկետեան դաշնակցութիւնը վերանորոգելու անհրաժեշտութեան վրա, որ անպիսի ծառայութիւն է մատուցել խաղաղութեան գործին: Եթէ երեքսկետեան դաշնակցութիւնը չը վերանորոգվի, այն ժամանակ—անպիսիակ լրագրի ասելով—Եւրոպայի գրութիւնը խիստ անորոշ եւ երեւուն կը լինի: Որքան էլ ծանր լինէին այն դոյնը, որ կը պահանջէր դաշնակցութեան վերանորոգումը, այսուամենայնիւ նրանց նշանակութիւնը չնչին է համեմատելով այն վտանգների հետ, որոնք անխուսափելի կերպով կը ծագեն պետութիւնների նոր համալսարանից:

—Լոնդոնից հեռագրում են «Էյր» լրագրին, որ Չեմբերլէյնի յայտարարութիւնը համայնքների ժողովում այն մասին, թէ բեքները մերժել են կիտայների կողմից առաջարկված խաղաղութեան պայմանները, ճշույտ տպաւորութիւն գործեց հասարակութեան վրա: Ամենքը կասկած են յայտնում վերջին ժամանակներում ձեռնարկված գլխաւորական բողոքութիւնների աշնորութեան վերաբերմամբ:

—Գերմանական Վիլհէլմ II կայսրի հետ պատահած վերջին դժբաղդ դէպքը պատճառով՝ կայսրի անձնական ապահովութեան վերաբերեալ կարգերը կենթարկվին փոփոխութեան: Վճռված է բազմացնել կայսերական թիկնապաշտներ թիւը եւ աւելի խիստ կանոններ սահմանել կայսրի ճանապարհորդական դէպքերի համար: Ոստիկանական զինուորները կը զրաւեն այն ճանապարհը, որով պէտք է անցնի կայսրը, եւ կը կանգնեն երեսները ժողովրդի կողմն ուղղած, որպէս զի հնարաւորութիւն ունենան տեսնելու ամեն մի կասկածելի շարժում եւ ժամանակին վտանգի առաջն առնելու: Մի ատեն ձին պահապառու կը դնայ նախօրք այն տեղը, ուր մտադրել կը լինի կայսրը ուղեւորվել, եւ տեղական ոստիկանութեան հետ միասին ապահովութեան միջոցներ ձեռք կառնի:

—Լարիսայում (Թէսալիայում) կատարված փորութիւնների ժամանակ, ինչպէս հաղորդում են արտասահմանեան լրագիրները, գտնվել է քրոչկականութեան հայր՝ Հիպոկրատի գերեզմանը:

—Ինչպէս հաղորդում են «Neue Freie Presse» լրագրին, աւստրիական Ապրիլի վրա եկել է կարմիր ձիւն: Մի քանի տեղերում եկել է նաեւ դեղին ձիւն: Այս տարօրինակ երեւոյթը նոյն կարգից է, որպէս եւ արեւմտեան անձրեւը, որ մօտ ժամանակներում տեղաց Սիբիրիայում եւ հարաւային Իտալիայում: Շատ հաւանական է համարվում, որ թէ արեւմտեան անձրեւն եւ թէ կարմիր ձիւնը հետեւանք են աֆրիկական անապատների կարմիր աւազի, որ օդի չափազանց ուժեղ հոսանքով մղված է Եւրոպա:

—Գերմանական լրագիրները ակնյայտին դուրսեւումը չեղում են այն հանգամանքը, որ թիւրքական կառավարութիւնը խորհուրդ հարցնելու եւ օգնութիւն խնդրելու դէպքերում դիմում է Գերմանիային: Ոչ միայն թիւրքական զորքերը սովորում են գերմանական զինակալների միջոցով, այլ եւ գերմանականութեան մէջ թիւրքեան հարկաւոր է համարում սովորել գերմանացիները: Քիչ ժամանակ առաջ գերմանացի գիւղատնտես Հէյման նշանակվեց գիւղատնտեսութեան վերատեսուչ թիւրքիայում: Նրա միջոցով բացվեց Կ. Պոլսի մօտ, Մալկալիում, գիւղատնտեսութեան բարձրագոյն դպրոց եւ նրան կից անտառապետների դպրոց, որի մէջ սովորում են 80 աշակերտներ: Բացի այդ դպրոցներից՝ բացված են երկրագործական դպրոցներ Բրուսայում, Անգորայում եւ Սալոնիկում: Գիւղատնտեսական օրինակելի ազարակներ բացված են Սկրաստիայում, Հայկապոլիս, Դոնիայում, Արշալայում, Էրզրումում եւ Դամասկոսում: Այդ դպրոցներ եւ ազարակների կառավարիչներ իրանց կրթութիւնն ստացել են Գերմանիայում, նը-

